ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊՐՆ Գ. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությունը՝ առարկությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով եմ վերադարձնում Ազգային ժողովի կողմից 2014 թվականի մայիսի 19-ին ընդունված «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, քանի որ Ազգային ժողովի հինգերորդ գումարման հինգերորդ նստաշրջանի ընթացիկ քառօրյայում նախատեսվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի երկրորդ ընթերցմամբ քվեարկությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացված «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի ստորագրումը նպատակահարմար չէ:

Կից ներկայացնում եմ նաև հիշյալ օրենքը Ազգային ժողովում քննարկելիս Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգադրության պատճենը:

Առդիր՝ 5 էջ:

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2014թ. հունիսի 10
ՀՆ-888